ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՈՒԼԻՍՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

04.08.2016 18:07

Հարգելի հայրենակիցներ,

Հուլիսյան դեպքերի հետ կապված գործերով ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակ է ստացվել քրեական վարույթ իրականացնող մարմինների կողմից կայացված 46 որոշում՝ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ: Հանրային պաշտպանի գրասենյակը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների համապատասխան՝ անհապաղ որոշումներ է կայացրել գործերը հանրային պաշտպաններին հանձնելու վերաբերյալ: ՀՊԳ-ն գործել է անազատության մեջ գտնվող անձանց անհապաղ որակյալ իրավաբանական օգնությամբ ապահովելու նպատակով:

Հանրային պաշտպանները վարույթն իրականացնող մարմինների կողմից ներկայացվել են ձերբակալված թվով 46 անձանց, սակայն, ինչպես հայտնի է, պաշտպանի իրավավիճակ կարող էին ձեռք բերել միայն ձերբակալվածների համաձայնությունը ստանալու պահից: Թվով 40 անձինք տվել են իրենց համաձայնությունը, և հանրային պաշտպանները ստանձնել են վերջինիներիս պաշտպանությունը: Որևէ հանրային պաշտպան առանց տվյալ անձի համաձայնության չի ստանձնել վերջինիս պաշտպանությունը: Հանրային պաշտպանի գրասենյակում ստեղծման օրվանից ի վեր սահմանված է հերթապահություն, և հանրային պաշտպանները անհրաժեշտության դեպքում աշխատել են նաև ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝ ըստ հերթապահության գրաֆիկի: Իսկ հուլիսյան դեպքերից հետո հանրային պաշտպանները աշխատել են արտակարգ ռեժիմով՝ նպատակ ունենալով ժամ առաջ հանդիպել ձերբակալվածներին, ապահովել նրանց լռելու, մարդկային վերաբերմունքի արժանանալու իրավունքի իրացումը: Հանրային պաշտպանների մասնակցությամբ գործերով 10 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, և ձերբակալված անձինք ազատ են արձակվել:

Հանրային պաշտպանները այս պահի դրությամբ շարունակում են իրականացնել 21 անձի պաշտպանություն: Հանրային պաշտպանները գործել և գործելու են իրենց երդմանը հավատարիմ՝ ազատ ու անկախ, անկաշկանդ ու անմնացորդ, օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանել և պաշտպանելու են իրենց վստահորդներին:

Որևէ պետական մարմին չի կարող ազդել հանրային պաշտպանների անկախությանը, միջամտել նրանց գործունեությանը: Հանրային պաշտպանի գրասենյակը հավատացնում է, որ լինելու է հետևողական, որպեսզի յուրաքանչյուր գործով առավել արդյունավետ ու որակյալ պաշտպանություն իրականացվի, իսկ առկայության դեպքում՝ հանրային պաշտպանի յուրաքանչյուր թերացում դառնալու է քննարկման առարկա: Հանրային պաշտպանի գրասենյակը պատրաստակամ է իրականացնել հանրային պաշտպանության կարիք ունեցող յուրաքանչյուր անձի պաշտպանությունը:

Հարգանքով՝

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Մելանյա Առուստամյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })